ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- ----- 2025 թվականի №-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՏԱԹԵՎԻԿ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՐՈՒՅԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 2025 թվականի փետրվարի 7-ի №04/11.1/979-2025 գրությամբ ներկայացված տեղեկատվությունն առ այն, որ էլեկտրամագնիսական իրավիճակների հետազոտումների արդյունքում Երևան քաղաքի Մաշտոցի պողոտայի №5բ, 2-րդ տաղավար հասցեի նկուղային հարկում գործող «ՄԵՏԱՔՍԵ» խանութ-սրահում (գործունեություն իրականացնող անձ՝ անհատ ձեռնարկատեր Տաթևիկ Մնացականյան) հայտնաբերվել է առանց թույլտվության 890-902.5ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթում շահագործվող բջջային կապի վերահաղորդակ,

բ) առանց թույլտվության ռադիոհաճախականությունների տիրույթի օգտագործումը դադարեցնելու վերաբերյալ անհատ ձեռնարկատեր Տաթևիկ Մնացականյանին ուղղված Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2025 թվականի փետրվարի 11-ի №ԱԾ/34.2-Մ2-9/581-2025 գրությունը, որի վերաբերյալ որևէ փաստարկ չի ներկայացվել,

գ) որ իրավասու պետական մարմնի ներկայացրած տեղեկատվությամբ փաստվել է անհատ ձեռնարկատեր Տաթևիկ Մնացականյանի կողմից առանց թույլտվության 890-902.5ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթի օգտագործումը, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ժդ» ենթակետը, 3-րդ կետի «ե» ենթակետը, 60-րդ հոդվածը և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ

հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է**.

1. Անհատ ձեռնարկատեր Տաթևիկ Մնացականյանին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից դադարեցնել առանց թույլտվության 890-902.5ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթի օգտագործումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Տաթևիկ Մնացականյանին օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ**

ք. Երևան
-- --------2025թ.